220 Աչքերս հաճախ արցունքով են լցվում,

1. Աչքերս հաճախ արցունքով են լցվում,
Տխրությունն է պատում ինձ հանկարծ,
Եվ կարծես թե արդեն այդ վիճակում
Կորցրել եմ ուրախությունս անդարձ:

Ուզում եմ բերել իմ սիրտն Հիսուսին
Եվ աղերսել Նրան՝ Տե՛ր, ինձ օգնի՛ր,
Կորսվում եմ այս կյանքի ճանապարհին,
Տե՛ր Հիսուս, խնդրում եմ, ազատի՛ր:

2. Հարազատներս հաճախ չեն հասկանում
Իմ հոգու ցավալի վիճակը,
Ոչ մեկն ինձ օգնել չի կարողանում,
Շատ դժվար է այսպես ապրելը:

3. Օ՜, իմ Աստված, ես Քեզ եմ աղերսում,
Գթա իմ հոգուն խեղճ ու տանջված,
Ես կբժշկվեմ միայն այն դեպքում,
Երբ դեպ ինձ մեկնես ձեռքդ խոցված:

4. Ազատի՛ր ինձ բոլոր տանջանքներից
Եվ մաքրի՛ր մեղքերից իմ հոգին,
Եվ մեծ գոհությամբ ես սրտիս խորքից
Կփառաբանեմ Հիսուս Փրկչիս: